

**Լքված Գրադարաններ
պրոֆեսոր Ռոբեր Տեր-Մերկերյան
/Ֆրանսիա/**

Վերջին տարիների ընթացքում, Սփյուռքում, հատկապես ֆրանսահայ համայնքում, երևան է եկել մի նոր երևույթ, որն անվանել եմ ``լքված գրադարաններ``:

Թերևս անհրաժեշտ է հիշեցնել, որ ֆրանսահայ համայնքը Եվրոպայում ամենահին և ամենահայտնո՞ծ համայնքն է: Եղեռնից մազապուրծ տասնյակ հազարավոր հայ ընտանիքներ 1920 –ական թվականներին ապաստան գտան Ֆրանսիայում:

1920 – 1950 –ական թվականներին, Փարիզում ծավալվում է աշխույժ գրական մտավորական մթնոլորտ: Հիշենք այդ շարժման կարևոր դերակատարներին՝ Շահան Շահնուր, Ավետիս Ահարոնյան, Կարո Փոլատյան, Արշակ Զուպանյան, Շավարշ Նարդունի, Նիկողայոս Սարաֆյան և այլն:

Այդ տարիներին Ֆրանսիայում գործում էին մի շարք հայ հրատարակչություններ, բազմաթիվ գրքեր էին հրատարակվում, կար հայ մամուլ, գրախանութներ, համայնքային աշխույժ կյանք:

Այսօր այդ բոլորը չկա, ոչինչ չի մնացել այդ գրական – ազգային կյանքից. ``Յառաջ`` ամենօրյա հայալեզու օրաթերթը փակվեց մի քանի տարի առաջ, հանրահայտ Հրանդ Սամվելյան գրախանութը Փարիզում դադարելու է գործելուց մի քանի ամսից: Ֆրանսահայ մամուլը լույս է տեսնում ֆրանսերեն լեզվով:

1920 – 1950 –ական թվականներին լույս տեսած մամուլը, հրատարակված գրքերը հայ գրականության պատմության մասն են կազմում և այդ գրքերը փրկելը համապատասխանում է մեր համաժողովի նմանաբանին՝ անցյալի պահպանություն, հանուն ապագայի՝

Այսօր ֆրանսահայ համայնքը 90 տարեկան է՝ 4-րդ սերունդը 25-30 տարեկան է, ծնվել է 5-րդ սերունդը:

Առաջին սերունդը՝ 20-30 ական թվականներին մեծացած, հասուն սերունդը, գիտեր հայերեն գրել, կարդալ, խոսել: Այդ սերնդի մեջ կային շատ գրասեր, գրքասեր մարդիկ, որոնք կազմում էին ընտանեկան գրադարաններ: Նրանք գնում, հավաքում էին մեծ թվով հին հրատարակչություններ, հազվագյուտ գրքեր, արժեքավոր հավաքածուներ, մամուլ, հանդեսներ, պարբերաթերթեր: Իրենց գրադարանների մի մասն էլ ժառանգել էին ծնողներից: Այդ մարդիկ կարդում էին իրենց հավաքած գրքերը, խնամքով ու սիրով պահպանում էին իրենց գրադարանը և նրանք հպարտ էին իրենց ունեցած հավաքածուներով: Նրանց սերտ կապը հայերեն գրքերի հետ կարելի է բացատրել նաև կորցրած երկրի կամ քաղաքի կարոտախտով: Հայերեն գիրքը նրանց կապում էր իրենց արմատներին, իրենց ինքնությանը: Սփյուռքում, տանը հայերեն գիրք ունենալը մարդուն կապում է իր երկրի հետ, Հայաստանի հետ:

Այդ գրքասեր մարդկանց ժառանգները՝ նրանց հաջորդող սերունդը, 50-60 – ական թվականներին ծնված սերունդը, հայերեն հասկանում է, մի քիչ խոսում է, բայց կարդալ չգիտի, կամ բավականաչափ լավ չի կարդում իրենց ժառանգած գրքերը կարդալու և հասկանալու համար:

Հաջորդ սերունդը, որը ժառանգել է իրենց պապերի գրադարանը, բոլորովին չի կարողում հայերեն, հազիվ հասկանում է մի քանի բառ: Այսօր այդ գրադարանները ժառանգել են այն երեխաները, որոնք բոլորովին հայերեն չգիտեն և մանավանդ այդ ժառանգած գրքերը ոչ մեկ զգացական արժեք չունեն նրանց համար: Այդ սերունդը կորցրել է կապը իրենց ազգային արմատների հետ, նրանց համար անձանոթ են հայ ազգային մշակութային արժեքները:

Ինչպե՞ս բացատրել այդ միջսերնդական անջրպետը:

Այստեղ, թերևս արժե մի քանի խոսքով բացատրել ազգային մշակութային արժեքների փոխանցման մեջ տեղի ունեցած միջսերնդական խզումը:

2008 թվականին կատարել եմ հարցախույզ, որի նպատակն էր ուսումնասիրել ընտանեկան միջավայրում ազգային մշակութային արժեքների միջսերնդական փոխանցման համակարգը: Հարցերը վերաբերում էին ազգային ինքնության մնայուն արժեքներ ներկայացնող տարբեր գործոններին՝ լեզու, պատմություն, կրոն, ավանդական սովորություններ, մամուլ, գրական – երաժշտական ընկալունակություն, Հայաստանին վերաբերող զանազան իրեր՝ լուսանկարներ, սալիկներ, պատկերագրքեր, արձանիկներ, այսինքն՝ բոլոր այն գործոնները որոնք կարող են երիտասարդ սերնդին՝ երեխաներին, հիշեցնել, ներշնչել իրենց ազգային պատկանելությունը: Այդ հարցախույզի արդյունքները շարադրել եմ մի հոդվածի մեջ որի խորագիրն է՝ “Ազգային մշակութային արժեքների միջսերնդական փոխանցման լծակները ֆրանսահայ համայնքում” և որը լույս է տեսել “Պատմաբանասիրական հաղեսի” 2010 թ 1 համարում:

Ի՞նչ են պապիկ-տատիկները մի կողմից և ծնողները մյուս կողմից փոխանցում իրենց թոռներին ու զավակներին Միջուռքի միջավայրում:

Հարցախույզի արդյունքները ցույց են տալիս, որ լեզվական գիտելիքների փոխանցումը ծնողներից երեխաներին վերաբերում է երեխաների միայն 20 տոկոսին, որոնք տանը լսում են հայերեն խոսքը և ձեռք են բերում լեզվական տարրական գիտելիքներ: Նշենք, որ լեզվական գիտելիքներ փոխանցելու համար ծնողներն իրենք պետք է այս կամ այն չափով տիրապետեն հայոց լեզվին: Ազգային արժեքների միջսերնդական փոխանցումը կարող է իրականանալ միայն այն գիտելիքներից, որոնց տիրապետում են իրենք՝ փոխանցողները: Ինչպես ցույց են տալիս հարցախույզի արդյունքները, համեմատած պապիկ – տատիկ սերնդին, ծնողների սերունդն ունի անբավարար լեզվական գիտելիքներ, ինչը չի կարող ապահովել լեզվական սերնդափոխությունը: Ընդհանուր առմամբ, փոխանցվող արժեքները տարակազմ են, ոչ համասեռ, պայմանավորված իրենց՝ ծնողների ունեցած գիտելիքների ծավալով: Այս բոլորի արդյունքում, երիտասարդ սերունդը ընտանեկան միջավայրում ձեռք է բերում անկանոն, խայտաբղետ գիտելիքներ. մի մասը ժառանգում է լեզվական որոշ գիտելիքներ, մեկ ուրիշը՝ երաժշտական, մի երրորդը՝ պատմական և այլն: Բոլոր դեպքերում, ձեռք բերված գիտելիքները բավականաչափ հաստատուն ու խորունկ չեն երեխայի մոտ ազգային ուժեղ պատկանելության զգացում առաջացնելու համար:

Բացի այդ, ազգային ինքնության արժեքների ձեռք բերումը բավարար չէ անձի մեջ ազգային համայնքային պատկանելություն առաջացնելու համար: Անձը պետք է այդ արժեքները մշակի, կիրարկի կանոնավոր ձևով, դարձնի ապրելակերպ,

որպեսզի ինքը իր հերթին դառնա համայնքի լիիրավ անդամ ու ազգային ինքնության արժեքների փոխանցման շղթայի օղակներից մեկը: Այս բոլորից ելնելով, կարելի է հասկանալ, թե ինչու ֆրանսահայ համայնքում, 4-րդ սերնդի ճնշող մեծամասնությունը ամբողջությամբ կորցրել է կապը իր ազգային արժեքների հետ: Նա բացարձակապես անտեղյակ է հայոց մշակութային արժեքներին, կարելի է ասել, որ այդ սերնդի մեծամասնության համար խորթ են հայոց լեզուն, երաժշտությունը, պատմությունը, նա չի հետաքրքրվում Հայաստանում տեղի ունեցող իրադարձություններով: Այդ անձերը վերջնականապես ձուլված են ընդունող երկրի՝ սվյալ դեպքում Ֆրանսիայի, հասարակությանը:

Այս պայմաններում, պարզ է ու հասկանալի, թե ինչու իրենց պապերից ժառանգած հայերեն գրադարանները նրանց համար դարձել են բեռ, տեղ են գրավում, հաճախ գրքերը գտնվում են նկուղում ստվարաթղթե տուփերի մեջ:

Ահա թե ինչու այդ գրադարանները անվանել եմ ՝ լքված գրադարաններ՝ : Նրանք ժառանգորդները, ուզում են ՝ ազատվել ՝ այդ բեռից, բայց չգիտեն ինչպես, ում դիմեն կամ ուր դիմեն:

Պետք է ասել, որ լքված գրադարաններում լինում են շատ արժեքավոր գրքեր: Ահա մեկ օրինակ: Ամուսնու մահից հետո, մարսելաբնակ տիկին Ժ. Մելքոնյանը ինձ դիմեց խնդրելով, որ նայեմ ամուսնու հորից մնացած գրքերը, մոտ երեսուն հատոր: Նա չգիտեր ինչ անել այդ գրքերի հետ, որոնք գտնվում էին նկուղում: Պարզվեց, որ այնտեղ շատ արժեքավոր գրքեր կային, հատկապես՝ Բոստոնում լույս տեսած ՝ Հայրենիք ՝ ամսագրի 1927-1930 թ. հավաքածուները, ինչպես նաև անցյալ դարասկզբին Կոնստանտինոպոլսում և Վենետիկում լույս տեսած գրքեր: Տիկին Մելքոնյանը, իմ առաջարկով, համաձայնեց այդ գրքերը նվիրել Ազգային Գրադարանին : Ես այդ գրքերը իմ ճամպրուկների մեջ փոխադրեցի Հայաստան ու հանձնեցի Ազգային Գրադարանի տնօրինությանը, գրքեր, որ Ազգային Գրադարանը չունի: ՝ Հոգևոր Հայրենիք ՝ -ը այդ առիթով շնորհակալական խոսք ուղղեց տիկին Մելքոնյանին:

Լքված գրադարաններից ՝ ազատվել ՝ ցանկացողները հաճախ են ինձ դիմում, խորհուրդ հարցնում, թե ինչպես կարելի է փրկել, այսինքն՝ ճիշտ տեղ հասցնել, իրենց ժառանգած գրադարանը:

Պետք է ասել, որ այդ գրադարանների թիվը տարեց տարի կարող է շատանալ ֆրանսահայ համայնքում: Երևույթը ավելի մեծ ծավալ է ստանալու գալիք տարիների ընթացքում: Անհրաժեշտ է որդեգրել մի ռազմավարություն, գոնե կարևոր, արժեքավոր գրքերը Հայաստան վերադարձնելու միջոցները գտնելու համար:

Կարծում եմ, որ Ազգային Գրադարանը, Էջմիածնի նորաբաց Մատենադարանը, ինչպես նաև Մատենադարանը պատրաստ են աջակցել, գտնել ուղիներ այդ ռազմավարությունը սահմանելու համար: Դա կնշանակի իրականացնել մեր համաժողովի նշանաբանը. Անցյալի պահպանություն՝ հանուն ապագայի ՝ :